ՅԱՒԵԼՈՒԱԾ ԱՐԱՐԱՏԻ 1896 Թ., ՅՈՒՆԻՍ.

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ*

Գ.

Ա. ԾԱՂԱԳՍ ՇՐՋԱԳԳԱՑՈՒԹԵԱՆ ԵՐԿՆԻՑ՝ ԹԷ ՈՐՊԷՍ ԻՄԱՍՏԱՍԻՐԱՑՆ ԹՈՒԵՑԱԻ. 2 || ԱՆԱՆԻԱՑԻ ՇԻՐԱԿԱՑՒՈՑ ԱՍԱՑԵԱԼ. || 3

Գործք աստուծոյ մեծամեծ են [4] ասէ Իսրայէլի թագաւորն Դաւիթ, և զամենայն ինչ իմաստութեամբ արարեալ պատմէ աստուածային ստացուածոցս գոյս. [5] զի են՝ որք ի տեսութեան աչաց են, և են՝ որք յիմանալեաց քննութեան։ [6] Արդ վերին զայն երկին, զոր յոյնք եթերն [7] կոչեն և քաղդէացիքն հուր թաղկեալ, որ կոչի հրատ բոցեղէն. զի է հուր՝ որ առանց նիւթոյ [8] է, պարզ ըստ այլախառն [9] շարադրական մասինն, զի չէ յումեքէ, այլ յոչընչէ. [Ա 452a] և ոչ որ ի նմանէ յեղելոցս, և ոչ որ ի վերքան զնա, այլ ինքն յինքեան [10] առանձնացեալ՝ անհատանելի էութեամբ, [11] պարզ միութեամբ, տարածեալ զաւրէն վերնայարկի ձեղուան, [12] անթիւրելի շրջափակութեամբ, բոլորաձև հարթութեամբ զերկրովս գնդանման, [13] անդադար և անյաղթելի շրջագայութեամբ երագարագէս, անտեսանելի նիւթականութեամբ, իմանալի և եթ, որ յերկու կիսագունդս բովանդակի՝ ներքին և վերին՝ ըստ երկրիս գրի հանդէպ միմեանց։

Եւ ի ներքոս փակեալ ունի զմեծս զայս զաշխարհ և զսաստկութիւն հողմոց [14]—զի յանկութիւն [15] է հրոյ և հողմոյ առ միմեանս—զի նորա [16] շրջապատութեամբն իբրև կա[մ]ար [17] իմն ձևանայ և աւդոցն անաւսրութեամբն [18] իբրև յաման ինչ ըմբռնեալ՝ որպէս ջուր ի խեցեղէն ինչ կամ ի նիւթեղէն աման ըմբռնեալ՝ պահի լուծութեամբ։

Այսպէս և հողմք ի սփիւռ [19] տարածմանէ ձևացեալ եղեն վերին երկնի շրջափակութեամբ։ Բայց ունի նա զերկիր շրջափակութեամբ և զջուր ի ներքոյ փակեալ, որք ծովք անուանին. որպէս զթաղկութիւն բալոյ նորա ծին է, այլ սա ծննդական ջրոյ, [20] որ լինի ի ծնչմանէ հողմոց։ Զի [ի] շարժ-կոծելն՝ կամ յորդորիւն կամ մեղմ՝ նա ըստ իրաց յուզմանն, որպէս ի կենդանւոջն, թէ առաւելու հրայինն՝ նուազեցուցանէ զխոնաւայինն, և խոնաւումն բազմացեալ՝ զհրայինն պակասեցուցանէ։ Ընդ նմին աւդն՝ որ է շունչն՝ իրաց բառնայ զջերմութիւնն, [21] վճարի ի կենդանութենէ մահուամբ։ Զի պիտոյ են զոյգխառնութիւնք [22] չորիցս այս՝ զոր աստուած խառնեաց ի միասին։

---

* Հրատարակչի բացատրական յօդուածը կտպուի առաջիկայ համարում։ Խմբ.

Ա

1 Ա «որպէ» 2 Բ «թվեցաւ» 3 Ա չիք 4 Բ «մեծամեծք են և զանազան» 5 Բ «ըստացուածոց ոգւոյս» 6 Բ «քննէութեան» 7 Բ «յոյնքն եթեր» 8 Բ «նիւթոյ» 9 Ա շատ յաճախ ունի լիւնի փոխանակ փշիկով ղ ա տ։ 10 Բ «յինքենէ» 11 Բ «էբնութեամբ» 12 Բ «վերնայարկի ձեղուանն» 13 Բ «գդանման» 14 Բ «հողմոյ» 15 Բ «յանգութիւն» 16 Բ «նորայ»։ այսպիսի ուղղագրութիւն շատ յաճախ Բ օրինակում։ 17 Ա «կա.ար»։ լուսանց.քում աւելացրած է ենթագրաբար «ա»=կապար։ Նա և «կամար» ։ «կաղապար»։ Մենք ընտրում ենք «կամար» վարկածը։ Բ օրինակն արդէն լուսանց.քագրութիւնները մտցրել է բնագրի մէջ այսպէս. «իբրև կամար կաղապար կապար իմն ձևանայ»։ 18 Բ «և ոդոցն անատրութեամբն» 19 Բ «ի սպիւռ» 20 Բ «ջրոյ է» 21 Բ «զջերմութիւն» 22 Բ «զոյ.քխառնութիւնք»։

Բ. ‖ Յաղագս Անծրեւաց թէ զի՞նչ է։

Յաստուածային խորս իմաստութեան մարդկան մտածմունք ‖ [1] ոչ կարացին իջանել, բայց որ զքննութիւնս երկրի վարժին ուսմամբ ըստ երիցս այս դիմաց՝ շրջելով և տեսութեամբ և լսելով՝ կամեցան ոչ յամենեքին անհասութեան թողուլ զարարածս։ Եւ զծովն մեծ զայն շուրջ պատեալ զաշխարհս[2] ասացին. և ի բազում տեղիս և կողմանս, յարևելս և յարևմուտս, ի հիւսիսի[3] և ի հարաւ և ի դոգս [Բ 310b] և խորշս[4] դիմեալ ծովացեալ և անջրպետ կղզիք մնացեալք ի չորեսին կողմանս, յոր բնակեն բազում աշխարհք։[5] Եւ կէսք ի նոցանէ Ատլանտինէ[6] կոչեն զնա և այլք Ովկիանէ։ Որ ինչ փոփոխմունք յերկրիս [Ա 452b] կրին ի հողմոց և բերեն ախտս[7] ըստ ազգի ազգի ցաւոց և առողջութեան անտի լինին։ Եւ է ինչ որ դարձեալ իւրաքանչիւր երկիրս գոլորշեաց յորոց գործի վնասք և աւգուտք։ Եւ երկու շոգիք փղձկալիցք[8] յաճախ և ստէպ յերկրէ աստի յաւդս երանեն նրբապէս անտեսանելի աչաց, որ թուի թէ յարևելս յաճախ լինի։ Եւ են դարձեալ, որ ի գետոց և յաղբերաց լինին։ Երևին ինձ այսպէս նմանութեամբ՝ զի մին է ցամաք ծխալից, և է նա ի հողմոց անտի, և միւսն խոնաւ է թանձրամած՝ ի գիճականութենէն զփղձուկն տալով և առնլով. և ի նմանէ[9] լինին բալք և տեսիլք սառամանեաց, ամպք[10] և անձրևք և ձիւնարերք և կարկուտք։ Բայց ի շոգւոյ[11] անտի՝ հողմք ազգի ազգի, որոտմունք և փայլատակմունք, կայծակն և հուր և որ ինչ նման է սոցին։

Գ. ‖ Յաղագս Բալոյ։

Բալ լինի ի նաւսրութենէ ամպոց։ ‖ [1] զի յորժամ թանձրանայ՝ ի բալ դառնայ և յամպս՝ ամուլ և անծնունդ յորդաբուղխ[3] անձրևաց, զոր սակաւութեամբ ինչ խոնաւեցուցանէ զերեսս երկրի. զոր յոյնք ընդդէմդարձ ասեն սակս արգելոյ[4] զարեգակնային ճառագայթս և զանձրևաց,[4] զոր աստուած կարգեաց[5] յաւգուտ մեր։

Դ. ‖ Յաղագս Որոտման թէ[1] զի՞նչ է կամ ուստի։

Որոտումն լինի յորժամ վարին հողմք ‖ [2] ի վերին բռնութենէն[3] և ըմբռնեալ ի միջոյ ամպոյ[4] ի հողմ՝ ինչ և սաստկապէս ի բաց պատառել ամպոց՝ լինին[5] ճայթմունք և որոտմունք։ Եւ ի ճնշել հողմոյն հուր հատանի, զոր փայլատակմունս ասեն. զի ամենայն արարածք հուր ունին յինքեանս, բայց ամպոյն խտագոյն է։ Մինչ հատանէ յամպոյն՝ թէ թեթև՝[6] անձրև երանէ և ներքին աւդն[7] ի վայր անցանէ, և թէ թանձր երանէ և հանդիպի ումեք՝

Բ

1 Բ չիք։ 2 Բ «զաշխարհով» 3 Բ «ի հիւսհսի» Ա «ի հիւսւսի» 4 Բ «ի խորշ» 5 Բ «աշխարք» 6 ԱԲ «անտոտինէ» 7 Ա «և հողմոց և բերեն ախտս» Բ «և հողմոց և բենախս»8 Բ «շոքիք փղցքալիցք» 9 Բ «ի նմանէն» 10 Բ «ամք» 11 Բ «ի շոգոյ»

Գ

1 Բ չիք 2 Բ «անծնունդս յորդաբուխ» 3 Բ «արգել լոյս» 4 Բ «զանձրևացս» 5 Բ «պարգևեաց»

Դ

1 Ա շատ անգամ հնագոյն ուղղագրութեամբ «թե։ եթե» 2։ Բ չիք 3 Բ «բնութե-

ՁԵասէ. թէ անաւսր[8] ելանէ ոչ թողուն աւդք, յերկինս անդ ժողովի անՁեաս։
63 Բայց յաւուրս ձմերայնոյ ոչ լինի այս, զի ամպքն նաւսրացեալ լինի[ն] ի հիւսիսային[9] աւդոցն. զի հարաւային աւդն թանձրէ զամպն։

Ե. ‖ Յաղագս Ձեան։

Ձիւն լինի յորժամ ի հարաւակողմ խոնարհի ‖ [1] արեգակն[2] և հիւսիսային աւդն զաւրանայ և՝ թանձրագոյն աւդքն[3] ընդ միմեանս շփոթելով՝
70 թանձրանայ. և ի բաց հոսեալ կարատին մածուցեալ, ոչ կարացեալ դառնալ[4] [Ա 453a] ի ջուր։ Զի խստութիւն հողմոյ ոչ տայ[5] լուծանել ի նաւսրութիւն ջուրց. և յորժամ սաստկապէս թափի ի վայր՝ տաղտարափ կոչի, և մինչ[6] սեղմապէս՝ ձիւն ասի։

Զ. ‖ Յաղագս Կարկտի։

75 Կարկուտ լինի ի հողմոց, զոր ի թանձրացեալ [1] ամպոցն վերինն[2] բռնացեալ հանէ հողմոյ հիւսիսոյ, զոր ոլորելով բոլորէ ի խստութենէ և ի բաց հոսեալ յերկիր ընկենու. [Բ 311a] յորմէ և շաչիւն ելանէ, է որ ուժգնապէս[3] և է որ նուազապէս։ Բայց այլ ոչ ուստեք է՝ կամ յերկրի գոլորշեաց, կամ ի գետոց և յաղբերաց, կամ ի ծովուց, զոր կարգեաց իմաստութիւնն Աստուծոյ որում ոչինչ անկարանայ, այլ ակնարկելով նորա հաստատեցաւ ամենայն ինչ, զոր ոչ ոք կարէ հաստատ լինել ստուգապէս։

Է. ‖ Յաղագս Ամենանց հողմոց։

Որ բարեխառնապէս լինին հողմք՝ ասեմք ‖ [1] ցրտալից սիք։ Եւ սիք ասել սովորութիւն է. որ ի խոնաւուտ[2] տեղեաց ինչ շնչէ՝ն[3] երկրային ասեն, և որ ի հովտաց ելանէ հովտային։ Եւ որ ի գետոց ելանէ կամ յաղբերաց[4] կամ ի ծովէ՝ ջրային ասեն։ Արևելեանն ի ձմերան[5] ժամանակի յոլով լինի և արևմտեանն՝ յամառնային, և հարաւայինն ի հասարակ աւուրսն։ Բայց է, որ ի գարուն և յաշուն և ի ձմերան լինի։ Եւ են ի սոցանէ որ ուղղիդ շնչեն և են՝ որ զտեղեաւքն[9] պատին։ Եւ որ սաստիկքն են՝ մրրիկ ասեմք, որ յանկարծակի վերուստ ի վայր հոսին, և մառախուղ զլերամբն[7] պատեալ լինի։[8]

Ը. ‖ Յաղագս փոթորիկ հողմոյ, զոր ի քաջաղանս եւ յառասպելս Վիշապ հանել ասեն։

Փոթորիկն հողմ է, որ յերկրէ ի վեր ելանէ, ուր վիհք ‖ [1] ինչ հատեալ լինին, ի քակ և ի խոռոչացեալ տեղեաց ինչ, որ ի փող անկեալ ընդ երակս երկրի և ել ինչ գտեալ՝ միաժողով ի վեր զիմեալ թանձրացեալ ամ-

---

նէն» 4 Բ «ամբոյ. սոյն ուղղ. և յետոյ» 5 Բ «լինի» 6 Բ «թէ թևթէ» 7 Բ «և ներքի աւթն» 8 Բ «նաւսր» 9 Բ «զի հիւսւսային»

Ե

1 Բ «չիք 2 Բ գաղափարագիր ԱԲ գրեթէ միշտ հին ուղղագրութեամբ «հիւսւս» հիւսւսային» 3 Բ «աւդն» 4 Բ «դառնա» 5 Բ «տա» 6 Բ «յինչ» Ա «մինչ» լուսանցք. նոյն գրչով «մ»։

Զ

1 Բ «չիք 2 Բ «վերին» 3 Բ «ուշգնապէս»

պով ահագին դղորդիւնս հանէ, մինչև զմայրիս յարմատոց ի բաց հանել և վէմս [2] խլել։ Եւ զինչ գտանէ՝ ահագին ձայնիւ վերացուցանէ և ընկենու յերկիր։ և այս է, զոր վիշապ հանել ասեն։

100 Թ։ ‖ Յաղագս որ յաւդդ Նշան լինի պէսպէս։

Բազում և զանազան տեսիլք որ յաւդդ լինին, ‖ [1] է որ շանթ ասեն և է որ կայծ, և է որ հուր, և է որ փայլակն, և է որ սիւն հրոյ։ Է՝ որ յարևմտից կողմանէ գալանէ և է որ յարևելից։ է որ ի հարաւոյ և է որ ի հիւսիսոյ։ Եւ որ յարդաղոն կոչեն [այսպէս] [2] լինի։ դայ յաւդոց [Ա 453b]
107 թանձրացեալ, դուզնաքեայ [3] զինուորապէս ունելով կերպարանս։ Եւ է որ երբեմն անհաստատ լինել և երբեմն ոչ լինել։

Բայց ասաղ որ ձգի յաւդոյ ի շփելոյ հողմոց լինի։ է որ յերկար լինի չբթափեալ [4] ի բաց հրոյն և է որ առ ժամայն թափեալ լուծանի։ և է որ խստութեամբ ի բաց թաւթափեալ՝ երկայն ճանապարհաւ երթեալ [5] կորնչի։
110 Եւ բակղ [6] լուանի որ լինի՝ այդ թանձրացեալ աւդ է, որ ունի զճառագայթքս նորա, ելեալ ի դուրս նշոյլք՝ սակաւ բոլորակ լինի։ գուշակէ ամպոց։

Ժ։ ‖ Յաղագս Աղբերաց Բնութեան։

Աղբերացն բնութիւնք են այսպէս։ ‖ [1] յաւուրս ամարայնոյ բարձրանայ արեգակն [2] և հալածի հիւսիսական աւդն ի ներքոյ երկնից, աղդեցուցանել
115 զիւր ցրտութիւնն ի ներքոյ երկնից, որով հովացեալ լինի աղբերաց բնութիւն, որ ի վեր բղխէ։ Եւ ի հարաւ իջեալ արեգական՝ [3] յամեալ ընդ երկրաւ՝ ջեռնուն ներքին շատամարանք ջուրց։ զի հարաւայինն ազդէ ի ներքինս [քան]զի հիւսիսայինն բռնացեալ տիրանայ։ Եւ [4] մարդկան բնութիւնք ըստ երկրի [Բ 311b] գոյանան։ զի ի ձմերանի [5] ջերմ լինի ներքին որո-
120 վայն, զիւրահալ լինի կերակուրն և ի վերոյ մարմինն հով, և յամարանի [7] ի վերոյ ջերմ ի ներքոյ հով։ Զոր և իմաստուանքն ի բժշկաց պատմեն զայս։ Ասկլիպիդեայ և Հիպոկրատեայ ուսմանն [7] ճարտարապետքն ասացին։

ԺԱ։ ‖ Յաղագս Շարժման թէ [1] ուստի լինի։

Շարժումն լինի ի հողմոց բռնութենէ, ‖ [2] զի են որ ընդ խորագոյնս

Ե

1 Բ չէք 2 Բ «ի խոնաւուտէ» 3 Բ «շնչէն» Ա «շնչեն» 4 Ա «յաղրիւրաց» 5 Բ «ի ձմերնան» 6 Ա «զտեղաւքն» 7 Բ «զկերամսն» 8 Ա «լինին»։

Զ

1 Բ չէք 2 Ա։ հին ուղղ։ «վեմս»։

Թ

1 Բ չէք 2 Ա ունի մակակէտ՝ ցոյց տուող որ բառ է պակասում։ 3 Բ «դուզնայքեա» 4 Բ «չթափել» 5 Բ «երթալ» 6 Բ «բակտ»։

Ժ

1 Բ չէք 2 Բ «բարձրանալոյ արեգական» Ա «արեգակն» բառը գաղափարագիր։ 3 Բ «արեգակն» Ա գաղափարագիր 4 Բ «նայն» 5 Բ «ի ձմերայնի» 6 Բ «յամարայնի» 7 Բ «ասկլիպիդեա և հիպոկրատէս ուսմանն» Ա «յուսմանն»։

գնան հողմք և ոչ կարեն շարժել զերկիր, այլ լոկ ձայն ածեալ գոչեն[3] զերկրաւս։ Եւ են դարձեալ որ ոչ կարի ընդ թանձրագոյնն[4] շարժեալ նմանապէս ձևով։ Եւ եթէ բռնացեալ ելս ի վեր զտանէ՝ յոլով քաղաքաց սպանումն գործէ և աւերումն շինուածոց։

Եւ է որ չգտեալ հողմոյն ելս՝ անցանէ անդրէն ահագին ձայն ածելով և դղրդիւնս երկրի, և ոչ ընդհանուր[5] շարժել, այլ ի տեղիս տեղիս, ընդ ժամանակս ժամանակս, այլ և այլ կողմանց, իբրև եղանակաւ իմն խաղացեալ գործոյն։ Է որ զաւրագոյն և է որ մեղմագոյն։

ԺԲ. ‖ Արիստոտելէս ընդդէմ որոց ասեն աստուած զտարերսդ այսպէս առաղրէ։

Թէ գոլով սոցա շարժութիւն՝ յայլմէ զաւրու ‖ [1]թենէ ունին սոքա զշարժիլն։ և եթէ է զաւրութիւն որ շարժէ զսոսա խնդ[Ա 454a]ելի է թէ ինքն անշարժ է թէ շարժուն։ Զի եթէ զհինգերորդ[2] էութիւնն ոք ասիցէ պատճառ շարժութեան սոցա՝ ահա և նա յաւետախաղաց և անդադար ունի զհիւ գալն զյաւեժաւն։ որով և նա շարժուն[3] է յաւէտ և որպէս յայլմէ հարկիչ զաւրութենէ ունի զմշտաշարժութիւնն։ Եւ եթէ գուցէ[4] այնպիսի։ որ զմեծն զայն շարժէ գոյակ՝[5] հարկ է անշարժ գոլ այնմիկ որ շարժէ՝ն զնա։[6] անյեղյեղուկ և անփոփոխ և անշարժ զաւրութիւն է նորա։ Եւ եթէ անյեղյեղ և առանց միասու և կիրս ինչ կրելոյ[7] է զաւրութիւնն այն՝ նա է աստուած արարիչ և շարժաւղ զամենայն։

ԺԱ

1 Ա շատ անգամ հին ուղղագր. «թե. եթե», Բ «թէ» նաև յաճախ «էթէ»։
2 Բ չիք 3 Բ «գոչեն» 4 Բ «թանձրագոյն» 5 ԱԲ «ընթանուր»

ԺԲ

1 Բ չիք 2 Բ «զե.երորդ» 3 Բ «շարժումն» 4 Բ «գուցցէ» 5 Բ «գոյական»
6 Բ «շարժեն զնայ» 7 Բ «կրելւոյ»։